ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՋԷԿ-ԲՄԾՁԲ-20/22 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «27» փետրվարի 2020թ.

2020թ-ի փետրվարի 27-ին՝ ժամը 15:00-ին, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ **ԵՋԷԿ-ԲՄԾՁԲ-20/22** ծածկագրով (գնումների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների մատուցման) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Բաղդասարյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրեն.
Ա. Վարդանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի շուկայի ուսումնասիրության և հաշվառման գծով մասնագետ.
Մ. Ալեքսանյան	Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի գնումների գծով մասնագետ.
Ա. Վարդապետյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի իրավապայմանագրային բաժնի պետ .
Վ. Հովհաննիսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսագիտական բաժնի մասնագետ :

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Ա. Պետրոսյանը:

Հանձնաժողովի նիստին ներկա էր Լաճ Գրուպ ՍՊԸ-ի տնօրեն Տ. Լաճիկյանը:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ալիսա Բաղդասարյանը, իսկ քարտուղարն էր՝ Արմեն Պետրոսյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. **ԵՋԷԿ-ԲՄԾՁԲ-20/22** ծածկագրով գնման նախավորակավորման ընթացակարգի հայտերի բացման և գնահատող հանձնաժողովի նիստը կասեցման մասին:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և ժամը սահմանելու մասին:

1. ԵՋԷԿ-ԲՄԾՁԲ-20/22 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ և ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ա. Բաղդասարյանը նիստը հայտարարարեց բացված:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել

ԵՋԷԿ-ԲՄԾՁԲ-20/22 ծածկագրով գնման նախավորակավորման ընթացակարգի հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք/այսուհետ նաև մասնակից/.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	հասցեները	էլ. փոստ
1	ՓՐՈՄՈՈՒՇԵՆ ՍՊԸ	ք. Երևան, Կիևյան 16	info@epromotion.am
2	ԼԱՃ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Ք. Գյումրի, Աբովյան 256	lachgroup.procurement@gmail.com
3	ԱՁ Նաիրա Մկրտչյան	ք. Երևան, Դրոյի 28շ., բն 24	naira.mkrtchyan45@mail.ru

Հանձնաժողովը արձանագրեց, որ

- Մասնակիցների կոմից ԵՋԷԿ-ԲՄԾՁԲ-20/22 ծածկագրով գնման նախավորակավորման ընթացակարգի հայտեր ներկայացված ծրարները կազմված են հրավերի/այսուհետ հրավեր/ պահանջներին համապատասխան:
- Մասնակիցների կողմից ծարարների բացումից հետո արձանագրվեց , հետևյալը՝ ԼԱՃ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի և ԱՁ Նաիրա Մկրտչյան-ի կողմից հայտով ներկայացված ծրարներում առկա էին հրավերով պահանջվող փաստաթղթերը, յուրաքանչյուրը համաձայն հրավերի ներկայացրել էր մեկ բնօրիակ և երկու պատճե, ՓՐՈՄՈՈՒՇԵՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացվել էր հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացվել էր մեկ բնօրինակ և մեկ պատճե, հրավերով պահանջվող երկուսի փոխարեն:

Որոշվեց՝

1. **ԵՋԷԿ-ԲՄԾՁԲ-20/22** ծածկագրով գնման նախավորակավորման ընթացակարգի հայտերի բացման նիստը կասեցնել, ՓՐՈՄՈՈՒՇԵՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի անհամապատասխանությունը շտկելու համար:
2. Հանձնարարել **ԵՋԷԿ-ԲՄԾՁԲ-20/22** ծածկագրով գնման նախավորակավորման ընթացակարգի քարտուղար Ա. Պետրոսյանին էլեկտրոնային փոստի միջոցով ՓՐՈՄՈՈՒՇԵՆ

ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում, ներկայացված հայտի անհամապատասխանությունը վերացնելու մասին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. **ԵՋԷԿ-ԲՄԾՁԲ-20/22** ծածկագրով գնման նախավորակավորման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և ժամը սահմանել 2020 թ-ի մարտի 2-ին ժամը՝ 16:30-ին ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում գտնվող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի վարչական շենքում:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Բաղդասարյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Վարդանյան _____

Մ. Ալեքսանյան _____

Ա. Վարդապետյան _____

Վ. Հովհաննիսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Պետրոսյան _____